Արձանագրություն N 3
ՀՀ ՈԿ ԳՀԱՊՁԲ-18/12 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 22 հոկտեմբերի 2018թ
ժամը 12:15

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Մ. Մուրադյանը
անդամներ՝ Հ.Մարգարյանը, Գ.Դանիելյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների մասին

(Մ. Մուրադյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.
Հրավերով սահմանված ժամկետում «Սմարթլայն» ՍՊԸ-ն հանձնաժողովին է ներկայացրել հրավերի 2-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը: Մասնակցի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստաթղթերը և գնահատման թերթիկները տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի հրավերով սահմանված պահանջի առկայության վերաբերյալ եզրակացությունը, ըստ որի մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց ներկայացված փաստաթղթերը՝ մասնակցի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը և գնահատման արդյունքում՝ հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Հիմք ընդունելով հանձնաժողովը անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները հանձնաժողովը որոշեց «Սմարթլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

4. Ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.
ա/ «Սմարթլայն» ՍՊԸ -ին ընտրված մասնակից ճանաչել՝ 1-ին չափաբաժնի համար:
Ընտրված մասնակից է ճանաչվել որպես բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Մ. Մուրադյան)

5. Հանձնաժողովը որոշեց.

ա/ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Մ. Մուրադյան

անդամներ՝ _____ Հ. Մարգարյան

_____ Գ.Դանիելյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան